# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌԻ ՄԱՐԶ
# ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 78
*26 ապրիլ 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 60-67 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   N 60

**09.04.2018**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով Գուգարք համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 15-ի N 11-Ա՝<<22 Լոռու մարզի Գուգարք համայնքի կամավոր խնդիրները,կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> որոշումը, հաշվի առնելով համայնքի ավագանու անդամ Մարիետա Սարգսյանի առաջարկը և ավագանու դրական եզրակացությունը ( նիստ 3, 14.04.2017 )՝*

Գուգարքցի զորացրված ժամկետային զինծառայող Ավագ Գրիգորյանին, ով մասնակցել է 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմին Արցախում, տալ դրամական օգնություն՝ 30000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

---

11 04 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 61

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0228 ԾԱԾԿԱԳՐԻ 29.4քմ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄՍԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԵՂԻԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76 հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գուգարքի գյուղապետարանի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը կառուցապատման տրամադրող հանձնաժողովի 06.03.2018թ. կայացած թիվ 1 նիստի թիվ 2 որոշումը, Գուգարքի ավագանու 05.04.2018թ. N 10 որոշումը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0228 ծածկագրի բնակավայրերի ընդհանուր օգտագործման 29.4քմ հողամասը տասը տարի ժամկետով, տարեկան 500 (հինգ հարյուր) դրամ վարձավճարի դիմաց, կառուցապատման իրավունքով տրամադրել մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Համսիկ Անդրանիկի Եղիկյանին և նրա հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
2. Ուժը կորցրած համարել համայնքապետի 27.03.2018թ. N 49 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

---

12 04 2018թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 62

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0064-0021 ԾԱԾԿԱԳՐԻ, ՍՈՒՐԵՆ ՄԱՐՔՍԻ ՍԱՔԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ 17.04.2006Թ. ՏՐՎԱԾ N 2012022 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0064-0021 ծածկագրի, Սուրեն Մարքսի Սաքանյանի ընտանիքին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք 6-րդ փողոց 1-ին փակուղի տուն 21

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 63

16 ապրիլի 2018

### ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 1-ին մասի 5 կետը՝*

Փոխանցել ներքոհիշյալ ուսանողների ուսման վճարները՝

1. Հայրապետյան Արթուր Արծրունի – 165000դր.
2. Սարգսյան Մարիամ Հայկի – 170000դր.
3. Հարությունյան Լիլիթ Արտակի – 100000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# ՈՐՈՇՈՒՄ N 64

**16.04.2018**

## ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Մխիթարյան Վիկտորյա- 35000դր.
2. Միկիչյան Նազարիկ – 60000դր.
3. Լիզա Սաքանյան- 30000դր.
4. Հրաչիկ Սարգսյան – 60000դր.
5. Գոհար Հարությունյան – 60000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի գ. Գուգարք

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» Ապրիլի 2018 թվականի N 65

### 06-031-0014-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3 կետով, 60-րդ հոդվածով, և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12/04/2001թ. Թիվ 286 որոշման է կետով, ՀՀ կառավարության 08/05/2003թ. Թիվ 714-Ն որոշման է կետով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ 510-Ն օրենքով, Հիմք ընդունելով 16/05/1995թ. կազմված սեփականության վկայագիրը, ըստ որի բնակարանը /քոթեջը/ պատկանում է Ռայա Արամայիսի Հովսեփյանին, իսկ բնակելի տան /քոթեջի/ զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-041-0014-0003 կադաստրային ծածկագրից բնակավայրերի նպատակային նշանակության 0.0085հա մակերեսով բնակելի բնակելի կառուցապատման հողամասը համապատասխանում է ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկին, այն որ սեփականաշնորհված բնակարանը իրենից ներկայացնում է երկրաշարժից տուժած համայնքում քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով սեփականաշնորհած սակավաբնակարան բնակելի տուն /քոթեջ/ և հիմք ընդունելով Գ. Վեքիլյան ՍՊԸ -ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, քաղաքացի Ռ. Հովսեփյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0014-0003 կադաստրային ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0.00885հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Ռայա Արամայիսի Հովսեփյանի /ծնվ. 1953թ./ և Քոթեջային 2-րդ փողոց 13/1 հասցեում գտնվող կից տնատիրության ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը, իսկ հողամասում գտնվող 1991թ. կառուցված 83.89քմ մակերեսով բնակելի տան /քոթեջի/ նկատմամբ ճանաչել Ռայա Արամայիսի Հովսեփյանի /ծնվ. 1953թ./ սեփականության իրավունքը:
2. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Կոթեջային 2 փողոց թիվ 13/3 :
5. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի նախկինում ներկայացված 05.03.2018թ. թիվ 39 որոշումը:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Առուշանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

# ՈՐՈՇՈՒՄ N 66

16 ապրիլի 2018

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԵՎ ԱՌԱՎԵԼ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՄԱՎՈՐ ՀՐՇԵՋ ՋՈԿԱՏՆԵՐ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 41 հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2017թ. սեպտեմբերի 6-ի թիվ 330-Ա որոշման 4 կետի 4 ենթակետի պահանջները*

## *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1. Կազմավորել կամավոր հրշեջ ջոկատ՝ համաձայն կից 1 հավելվածի:
2. Յուրաքանչյուր տարի՝ մինչև մարտի 1-ը ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային վարչություն ներկայացնել ջոկատի անձնակազմի ճշգրտված տվյալները:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարվում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Քարհանյանին:

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

Հավելված 1
Գուգարք համայնքի ղեկավարի
16.04.2018թ. թիվ 66 որոշման

# ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ՀՐՇԵՋ ՋՈԿԱՏԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՑՈՒՑԱԿ

1. Աշուղյան Տիգրան Նորիկի- հրամատար (077275733)
2. Գրիգորյան Ալիկ Նորիկի (077150735)
3. Ասլանյան Մեյրան Վաչիկի (094545724)
4. Ունանյան Նովել Լյովայի (0322-5-35-72)
5. Առաքելյան Լովիկ Լիպարիտի (077945973)
6. Սարանյան Կամո Վոլոդյայի (093787872)
7. Ղազարյան Մնացական Արամայիսի (077853321)

Աշխատակազմի քարտուղար Հ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 67

**18 ապրիլի 2018**

## ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 46 հոդվածի 1-ին մասի 5 կետը՝*

Փոխանցել Գուգարքի բնակչուհի Ջուլիա Սամսոնի Արամյանի ուսման վճարը՝ 175000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ